

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ
ԲԱԺԻՆ I**

- 1.«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) աշխատանքային էթիկայի կանոնները (այսուհետ՝ Կանոններ) իրենցից ներկայացնում են էթիկական և բարոյական նորմերի ու վարքագծի կանոնների ամբողջություն:
2. Կանոնները ներառում են Ինստիտուտի աշխատողների (այսուհետ՝ Աշխատող) համար աշխատանքային էթիկայի հիմնական նորմերն ու կանոնները:
3. Կանոններով սահմանված պահանջները տարածվում են բոլոր աշխատողների վրա՝ անկախ զբաղեցրած պաշտոնից:
4. Ինստիտուտի առաքելությունն է որակյալ, արհեստավարժ մասնագետ-կադրերի պատրաստումը և միջազգային շուկայում մրցունակ, ժամանակակից դասավանդման մեթոդներով հագեցած սպորտային բնագավառի բուհի կարգավիճակի ձեռք բերումը:
5. Ինստիտուտի նպատակն է ձևավորել աշխատանքային հարաբերություններ, որոնք պետք է հիմնված լինեն աշխատողների փոխադարձ հարգանքի վրա՝ առանց ոտնձգության և նախապաշարմունքների:

ԲԱԺԻՆ II

7. Ինստիտուտի սկզբունքներն են՝
 - 1) Արդարություն և պատասխանատվություն: Արդարությունը կազմում է Ինստիտուտի գործունեության հիմքը: Ինստիտուտի գործունեությունը ուղղված է յուրաքանչյուր աշխատողի կողմից բարոյական նորմերի և սկզբունքների պահպանմանը:
 - 2) Հարգանք: Ինստիտուտը հարգում է յուրաքանչյուր անձի և նրա իրավունքները:
 - 3) Բարելավման ձգտում: Ինստիտուտը անընդմեջ բարելավում է իր կողմից մատուցվող ծառայությունների որակը, օժանդակում է նորամուծություններին և զարգացնում է աշխատողների կազմակերպչական ոգին:
 - 4) Խմբային աշխատանք և համագործակցություն: Ինստիտուտը աշխատում է պահպանել արդյունավետ բարոյականության, համագործակցության, փոխհարաբերություններում փոխադարձ աջակցության մթնոլորտ: Ինստիտուտը հասնում է լավ արդյունքների՝ հետևելով խմբային աշխատանքի սկզբունքներին:

ԲԱԺԻՆ III

8. Ինստիտուտի աշխատողը պարտավոր է պահպանել էթիկայի հետևյալ կանոնները՝

- 1) հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները և պետական լեզուն,
- 2) կրել պատասխանատվություն Ինստիտուտի զարգացման ծրագրով սահմանված ուսումնադաստիարակչական գործընթացների ներդրման և կատարման համար,
- 3) գործընկերների և այլ ֆիզիկական անձանց հետ շփումներում ու գործողություններում լինել կարգապահ, շրջահայաց, արդարամիտ և օրինակելի. աշխատանքային հարաբերություններում պահպանել ենթակարգությունը (սուբորդինացիան),
- 4) աշխատանքային ժամերին և աշխատանքային ժամերից դուրս իր վարքագծով չնսեմացնել Ինստիտուտի հեղինակության նկատմամբ հանրության վստահությունը,
- 5) հարգել և հայցել գործընկերների մասնագիտական կարծիքը՝ վերջիններիս իրավասության շրջանակներում և գնահատել նրանց ներդրումը, գործընկերների հետ շփումներում ու աշխատանքային գործառույթներում լինել ուշիմ, օրինապահ, շրջահայաց, արդարամիտ, օրինակելի,
- 6) հարգել և միաժամանակ գնահատել գործընկերների ներդրումը Ինստիտուտի կրթադաստիարակչական գործընթացներում,
- 7) գործընկերոջ վերաբերյալ քննադատությունն արտահայտել միայն նրա ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը,
- 8) չօգտագործել աշխատանքային պարտականությունների ընթացքում հայտնի դարձած տեղեկատվությունը՝ իր անձնական շահերի համար,
- 9) աշխատանքային գործառույթներ կատարելիս հրաժարվել անօրինական կարգով առաջարկվող նվերներից, պարգևավճարներից և այլ խրախուսման միջոցներից,
- 10) Ինստիտուտը ներկայացնելիս կամ իր իրավասությունների սահմանում Ինստիտուտի անունից գործելիս, այլոց հետ շփումներում և գործողություններում լինել արդար և շրջահայաց,
- 11) ոչ աշխատանքային նպատակներով չօգտագործել համակարգիչները և ինտերնետային կապը,
- 12) աշխատավայրում չծխել,
- 13) պահպանել բարոյական նորմերով սահմանված էթիկայի այլ կանոններ:

ԲԱԺԻՆ IV

9. Ինստիտուտի աշխատակիցներին արգելվում է՝

- 1) Ինստիտուտի անունը կամ կապերն անձնական կամ Ինստիտուտի խնդիրներին չվերաբերող այլ նպատակներով օգտագործումը,

- 2) աշխատատեղում աշխատանքային պարտականություններից դուրս աշխատանքերի կատարումը, եթե այդ աշխատանքը չի հանձնարարվել աշխատակցի անմիջական ղեկավարի կողմից կամ վերջինիս իմացությամբ,
- 3) առանց գործատուի համաձայնության Ինստիտուտի այլ աշխատակցի իր աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը հանձնարարելը,
- 4) Ինստիտուտի գույքը, այդ թվում՝ աշխատանքի համար նրան տրված անհրաժեշտ գործիքները, սարքավորումները, հատուկ հագուստը փչացնելը կամ կորցնելը,
- 5) իր անմիջական աշխատատեղը, ինչպես նաև ստորաբաժանման և Ինստիտուտի տարածքը աղտոտելը,
- 6) բացառել դիմացինի նկատմամբ ամեն տեսակի անհարգի վերաբերմունքի դրսևորումը անկախ զբաղեցրած պաշտոնիցը:
- 7) աշխատակիցները չպետք է թույլ տան ինստիտուտի հեղինակությունը վարկաբեկող իրավիճակների ծագումը,
- 8) աշխատողների նկատմամբ խտրականության դրսևորումը՝ սեռային, տարիքային, ազգային էթնիկական կամ սոցիալական ծագման, ռասայի, մաշկի գույնի, կրոնական, առողջական և այլ հիմքերով,
- 9) ծառայողական կամ գործունեության հետ անմիջականորեն կապված գաղտնիքներ հրապարակելը կամ դրանց մասին մրցակից բուհերին հայտնելը:

ԲԱԺԻՆ V

10. Էթիկական նորմերի և կանոնների խախտման հետ կապված հարցերի քննարկման նպատակով, Ինստիտուտում ձևավորվում է էթիկայի հարցերով հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով), որի ձևավորման, կազմի, գործունեության, իրավասությունների շրջանակի վերաբերյալ հարցերը կարգավորվում են «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) աշխատանքային էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության և գործառույթների իրականացման» կանոնակարգով:

ԲԱԺԻՆ VI

11. Սույն կանոնները հաստատվում է Ինստիտուտի ռեկտորատի կողմից:
 12. Կանոններում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են ինստիտուտի ռեկտորատի որոշմամբ:

*Ուժը կորցրած ճանաչել ինստիտուտի գիտական խորհրդի՝ 29.02.2016թվականի նիստում հաստատված՝ 'Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ' պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատանքային էթիկայի կանոնները:

